

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ԳԵՂԻՐԴԵԱՆ

«Վիշապների Աշխարհում», հատոր Ա., «Ցանկ», Վիկինա, 1934

Գեղեցիկ գիրք է գրել Տիկ. Հայաստան Գէորգեամը - «Վիշապների Աշխարհում»: Այդ աշխարհը՝ մեր հայրենիքն է՝ Հայաստանը, վիշապները՝ ցարն ու սուլթանը, որոնք նաև էին մեր լեռներում եւ որոնց ձեռքից տառապում էր մեր ժողովուրդը: Այդ ամենը այժմ անցեալ է, եւ Տիկ. Գէորգեամը պատմում է իբրև յուշ՝ այնպէ՞ս մտերիմ ու յուզիչ խօսքերպ:

Գիրքը սկսում է Շիրակի բնութեան ու գիւղացիների նկարագրութեամբ: Հեղինակը դեռ փոքրիկ աղջիկ է եւ անպանոյն ու անկեղծ խօսքերպ, անհուն կարուով պատմում է իր տեսածն ու զգացածը: Նա պաշտում է իր ծննդավայրը եւ սիրում շիրակցուն, որ «աւելի շատ երգում էր քան խօսում», որ «հեղ էր, համեստ, եւ միայն իր երգերի մէջն էր դնում սիրտն ու հոգին»: Նա ներկայացընում է իր ընուանիքի անդամներին, գիւղը, գիւղացիների կեանքը, նրանց ուրախութիւնը ու տիրութիւնը, հաւատալիքներն ու սնուտապաշտուրթիւնները, մանկական խաղեր, տասիկի հեթեարեները, բնութեան գեղեցկուրթիւնները, «հայոց սարերը հեթեարեներով եւ առասպելներով լեցուն»: Ամէն ինչ վարդագոյն են երեւում փոքրիկ Հային: Մարդի ու բնութիւնը զւարք են ու երջանիկ:

Բայց վիշապները նախանձու են, քոյլ չեն տալիս, որ ժողովուրդը հանգիստ ապրի: Սահմանի այն կողմը՝ զուրում կարմիր սուլթանը խմում է հայի արքին: Այս կողմ էլ՝ ցարը: Փոքրիկ

Հայը ականատես է լինում Աղեխանդրապոլի ցյոցին եկեղեցապատկան կալւածքների գրաւման առքիւ: Տեսում է Հայրիկի քախճառ աչքերը եւ այդ օրւանից սկսում է «մտածել ու դիտել»: Նրա ուշադրութիւնը գրաւում են ուսուցիչն հօր յեղափոխական ընկերները. նրա մայրն ու հայրն էլ՝ յեղափոխականներ են: Նա դպտին պատմել է տալիս ազգային «հեթեարեներ», յափշտակում է աշուների երգերով ու յեղափոխական պատմութիւններով, ազահութեամբ ականջ է դնում շրջապատի խօսակցութիւններին, երազում է իմբն էլ զինուոր ու յեղափոխական դառնալ: Եւ այնքան դժբախտ է, որ աղջիկ է ու չի կարող կուրի դաշտ գնալ...

Իսկ շուրջը կոիւ է: Սասունում պատմքութիւն հերոս Անդրամիկի զեկավարութեամբ: Անդին՝ ևեռումները ուսումնապոնական պատերազմ: Քիչ յետոյ, սկսում են հայ-քրքական ընդհարումները: Սշլարի լիքն է խորհուրդներով ու դէպֆերով, որոնց արձագանքները հասնում են եւ Շիրակի գիւղերը, խընդում գիւղացիների մտքերը, շարժում յեղափոխականներին: Փոքրիկ Հայի հայրիկը դպրոցը բողած՝ յեղափոխութեամբ է գրաւած: Հայրիկին գործակից է մայրիկը, գիւղի երիտասարդները: Գնում ու զալիս են զինած մարդիկ, հայդուկներ: Թնդում են յեղափոխական երգեր: Ժողովուրդը իր իրաւումները, իր արդար դառն է պաշտպանում:

Բայց ... գլուխ է բարձրացնում վի-

շապը: «Ու ցարի ժանդարմները եկան մի գիշեր եւ հայրիկիս քանտ տարան: Խնչպէս շա՛տ շատերին»: Սուզէ է իջմում Շիրակի գիւղերի վրա: Ցաւին չի դիմանում ու մեռնում է տատիկը: Մայրիկի աշխերը միշտ արցութեոս: Հայրիկը չկայ: Ու «Ես մտածում եմ. սուլթանը եւ ցարը Հայոց երկրի վիշապներն են: Նրանք նստել են մեր երկրի աղքիւրին եւ ամէն օր ոստիկաններ են ուղարկում մեզ մօտ, որոնք ծեծում են մարդկանց, երում, Սիրիի սառնամանիմները աւարում, որ այնտեղ ցրտից մեռնեն»:

Փոքրիկ Հայաստանը սակայն չի վեհատում. «Է՞ոյսը յաղբում է մրին, չէ՞: Իիշո՞ւ պէտք է շյաղբէ եւ մեր երկրում: էս արդար արեւի երկրում: Զննաղ Արագածի ստորոտում: Նա կը յաղբէ»:

Այսպիսի հաւատով, կարուով ու քրոռուն յոյզով գրւած է ամբողջ գիրքը, որ սկզբից մինչեւ վերջ համակ հեֆեար է ու երգ: Տիկ. Հայաստանը գրում է սրտով: «Նա ամենազծ է, երբ ասում է, թէ՝ «սիրում էի Հայոց վեհափառ սարերը, հիմուն մեր երկրի գրոյցներով, հպարտ էի այդ հողի, այդ

սարերի զաւակը լինելուս»: Ընթերցադըն էլ համակաւմ է նոյն զգացմունքներով, երեւակայութեամբ փոխադըրում է նոյն աշխարհը՝ «Վիշապների աշխարհը»:

Գիրքը գրւած է մաքուր եւ գեղեցիկ հայերէնով: Ոնք՝ պարզ, պատկերաւոր ու կենացի, ներդաշնակ ու երածըշտական: Հջեր կամ, որոնք գեղեցիկ արձակ քանաստեղծութիւն են: Կարդացում են յափշտակութեամբ:

Գիրքը երատարակած է ճաշակով: Կողքը զարդարւած է հեղինակի հաւատը խորհրդանշագույն սիրուն նկարով – մի փոքրիկ աղջիկ, երեղէն սուրբ ձեռքին, նժոյզը հեծած սլանում է դէպի Հայոց լեռները...»:

«Վիշապների Աշխարհը», որքան մեզ յայտնի է, Տիկ. Գէորգեանի ամդրամիկ գրական գործն է եւ, որպէս այդպիսին, անպայման յաջող է: Պէտք է մաղքել, որ շուտով լոյս տեսմէ եւ յաջորդ հասորը կամ հատորները: Տիկ. Գէորգեանին վերապահեած է պատւառը տեղ հայ կին գրողներու շարքում:

Ս. Վ. Բ.

A. SAFRASTIAN

“The Itinerary of Xenophon’s retreat”. The Asiatic Review, London, 1934.

Դարեկ թ.-ի մահամից յետոյ պարդի Արտաքսերքսէս թ., իսկ կրտսեր որդի Արտաքսերքսէս թ. իսկ կրտսեր որդի Կիւրոսը բաժին ստացաւ Փոքր Ասիական Սատրապութիւնը: Քրիստոսից առաջ 401 թին Կիւրոսը հաւաքեց 13 հազարոց վարձկան յոյների մի քանակ եւ շարժեց եղրօր դէմ Պարսկաստանի զանը զրաւելու նպատակով: Վարձկան յոյների մէջ էր եւ արենացի Քաննափոնը, որ քողել է այդ արշաւանքի նըկարագրութիւնը՝ հիմնած իր օրը օրին կատարած արձանագրութիւնների վրա: Ցաւական զօրամասը դրւու եկաւ Լիւ-

դիայից, 401 թ. մարտ 6-ին եւ ամցնելով Փրիւգիայի, Կիլիկիայի և Միրիայի վրայով՝ հասաւ Միջազնուք, ուր նոյն տարիայ սեպտ. 5-ին սեղի ութեցաւ Կումիկան նակատամարտը: Հակառակ պարսկների բւական գերազանցութեան, յոյների յաղբանակը եղաւ այնքան վընուական, որ Արտաքսերքսէս քագաւ. լրենու պատերազմի դաշտը եւ անգլուխ քաղնելով իր բանակը՝ գիմեց փախուստի: Բայց այդ միջոցին կուռմ սպանեց տաքարիւն Կիւրոսը: Պատերազմը յրջների համար կորցրեց իր իմաստը: Կասկածելով Արտաքսերքսէսի դաւադը-